

90 24-10-2016 - ΕΟΡΥΞΙΣ ΣΟΦΑΝΤΗΣ ΜΕΛΙΚ - (ΜΕΛΙΚ)

23 Σεπτεμβρίου 2016
Παλήν

Սիրելի պարոն Զիլինկիրեան,

Հայ մամուլէն տիսրութեամբ տեղեկացայ, որ իր հոգին աւանդած է տիկին Շամիրամ Սեւակ: Իր մասին բազմաթիւ վկայութիւններ կարդալէ ու լսելէ ետք, զինքը անգամ մը միայն տեսնելու բախտը ունեցած եմ Հայաստանի մէջ, Գրողներու միութեան յարկին տակ: Տպաւորուած էի. մտածել, երեւակալել իսկ, թէ այդ կինը Ռուբէն Սեւակի դուստրն է՝ անպատմելի զգացումներ կը ծնէր մէջս: Իր վրայ կը հանգչէին թերեւս նաեւ Վարուժանի, Կոմիտասի, Միամանթոյի շունչը: Տիկին Շամիրամ իր մարմնաւոր ներկայութեամբ այդ նահատակ սերունդին խորհրդանշական մէկ ներկայացուցիչն էր անկասկած: Պիտի շուզէի ըսել, թէ իրմով այդ սերունդն է որ կը մեկնի (որովհետեւ այդ ներկայութիւնը անշնչելի է), սակայն շօշափելի խորհրդանիշ մըն է որ կը յանձնուի յաւերժութեան գիրկը:

Ամրան շրջանին Փորթուկալ էի, տարբեր առիթներով մասնակցելու «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան ծրագիրներուն: Հեռաձայններ էիք, սակայն շկրցանք խօսիլ: Շնորհակալութիւն ձեր ցուցաբերած հետաքրքրութեան համար: Միսիթարեան վարժարանէ վտարումիս նիւթը բաւական նեղուցուցիչ պարագայ մըն էր: Դժբախտաբար, մեր վարժարանները թուրքիոյ մէջ այս ձեւով կը զեկավարուին այսօր: Պայքարի՞լ: Անշո՛ւշտ, առանց արդինքի մը սպասելու սակայն, միայն դոյզն ինչ բաներ մը փոխելու նպատակով կառավարումի այդ վտած դրութեան մէջ:

Բագրատ էսդուգեան փոխանցեց ձեր ողջոյնները: Շնորհակալ եմ:

Յաւակցութեան անկեղծ զգացումներով մնամ միշտ ձեր՝

Սեւան Տէյիրմեննեան